



ՓԱՅԼԱԿ ԾԻԱԾԱՆ  
(ԵՆՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ)

### Ո՞Վ ԳԻՏՆԻ ՍՆԿՍՆԵ...

Կոմիտաս վարդապետի խնկարույր հիշատակին

Գիտեին մարդիկ թե՛ շար, թե՛ բարի,  
Բոլորն անխտիր գիտեին հաստատ,  
Որ հայր մահվան եղել էր գերի,  
Հուր ու ավեր էր տեսել անընդհատ:  
Եվ ո՞ւմ չէր հայտնի, որ մեր Նաիրյան,  
Մեր հագարամյա երկիրը շքեղ,  
Մուգ ծով էր դարձել հարազատ արյան,  
Մի տրտում շուկա դարձել էր, ավա՛ղ,  
Որ ոսոխները և՛ նենգ, և՛ նկուն,  
Վաճառի էին դրել ամեն ինչ,  
Մեր վաստակն արդար ու գանձերն անհուն...

Սակայն ո՞վ գիտեր, գիտեի՞ն միթե,  
Որ մեր էլ սրտում հույզեր են կիզվել,  
Մենք էլ ենք ապրել տեսիլով ոսկե,  
Մեր հոգու մեջ էլ երգեր են կիտվել,  
Եվ մեր երկնահաս վես յեռներն ի վեր,  
Նետել ենք նրանց թովչանքը շոայլ...  
Որ այնտեղից էլ դեպ երկինք քնեն,  
Հասնեն մեր իրկրի պայծառ աստղերին,  
Գեթ այնտեղ հայի խոսքը շոնդա,  
Թեկուզ լոկ այնտեղ, Աստծուն մոտիկ,  
Վեհորեն հենչի մեր հավերգն ընծա...  
Մեր արյունն առին, ու մեր կյանքը ողջ  
Մեռելաբաղի հանդես սարկեցին,  
Բայց ծլեց դարձյալ ոգին մեր բողբոջ,  
Դարձյալ մեր կարմիր երազն հյուսեցինք...  
Շինարար ու խոլ պայքարի անցանք,  
Անհագ տաշեցինք տուֆ և որձափար,  
Որ վեր խոյանան վանք ու դպրեվանք,  
Կամուրջներ բռնեն խենթ գետերն ի վար,  
Որ մեր սուրբ հողը խաչքար ունենա,  
Բերդերն անառիկ միշտ կանգուն մնան  
Ու մեր փառքն անհաս անցնի փարից փար...  
Եվ ապա որդան մեր արյան գույնով,  
Գրիչները մեր ծարավ ու եռքի,  
Մագաղաթներ են ծաղկել անհամար,

Ուր մեր հույզերն են շնչել հոգեթով  
Ու մեր միտքն է միշտ հառազել պայծառ:  
Բայց մարդիկ միթե՞, միթե՞ գիտեին,  
Որ մեր հրկիզված հողի ընդերքից,  
Լույս արգասիքներ են բխել առատ,  
Որ մեր մայրերի հյուսված արգանդից  
Բազում հանճարներ են ծնվել անհաղթ,  
Պեղել ենք անխոնջ երկինք և երկիր,  
Մեր բազուկները մեկնել արևին,  
Որ լույսը առատ հոսի մեր վրա,  
Որ խավարն երբեք մեզ չտիրանա...  
Գիտեի՞նք արդյոք, որ մեր երկնի տակ,  
Մեր կապո՛ւյտ, կապո՛ւյտ երկնքի ներքո  
Հրաշք երկունքով աշխարհ են եկել  
Գիր ու դպրության արհաներն հզոր,—  
Մեծարյալ հսկա, Սահակը Պարթևի,  
Ու միշտ նենճերող մեր Նարեկացին,  
Մեր անցյալ փառքի հրաշքը վսեմ,—  
Աշխարհ են եկել մեր սուրբ փառքի,  
Մեր հաղթ մուրեքի մշակներն անգին,—  
Տրդատն հանճարեղ, Մանվելը խոհուն,  
Ու դեռ վարպետներ անթիվ, անանուն:  
Բյուր մագաղաթյա թերթերի վրա,  
Դույն ու գծերի հրաշք են ծաղկել,  
Ասես մեր աշխարհն են հոգեհմա  
Դարերի համար դրոշմել այնտեղ  
Սարգիս Պիծակն ու Ռուսիներ Թորոս  
Ու մյուս անհամար գրիչները մեր:  
Ու թեև դարձյալ տեսանք արհավիրք,  
Արևասպառ ընկանք թաթի տակ մահվան,  
Թվաց, թե արդեն ամեն ինչ կորցրինք,  
Ամեն ինչ արդեն արին փարուփանդ,  
Բայց նոր ու նորից, նոր կյանքի հեկով,  
Արյունը խայտաց մեր երակներում,  
Վառվեցինք դարձյալ ապրելու տենչով,  
Լուսեղեն փառքով լույս աշխարհ բերինք

Միտ խնդրույից արեցած մարդիկ՝  
 նահապետ Քուչակն ու Մայր-Նովան,  
 Ազգի թեժ սիրով այրված ու խանձված  
 Հավերժ անշիրիմ Արուվյանը մեր...  
 Կրճուտ հույզերի բորբ բոցերի մեջ  
 Տրտում մխաթող Դուրյանը անշեշ,  
 Վայրագ եղեռնին նահատակ դարձած  
 Վագրեհամունչ սեզ Սիամանթոն  
 Եվ խոռոխածայն Վարուժանը վես,  
 Ու դեռ ֆանիճե՛ր, որոնք մեր սիրույն,  
 Հանուն մեր անվան ու խղճմտանքին  
 Դիմակալեցին մահն անագորույն,  
 Բայց և երկնեցին մեր հոգու, մաքի,  
 Ու մեր դպրուրթյան փառքը վիթխարի...  
 Եվ ապա տրտում, անձայն, անշշուկ,  
 Դալուկը հակաին, վտիտ ու հյուծված,  
 Մեր հողի կրճիկն ոտք դրեց հանկարծ  
 Մի մանուկ տղա, մի որբ պատանի,  
 Հայացքը տարտամ արձակած հեռուն,  
 Միշտ խոռվանույզ ու միշտ էլ խոհուն...  
 Կոմիտասն էր նա, տիրակալն անհաղթ  
 Աշխարհին անհուն հայոց երգեր,  
 Ջայն ու շեշտերի կախարհը հսկա,  
 Մեր խոր վերքերի սուրբ սպեղանին,  
 Մեր դարիք հոգու կանչը կարոտի,  
 Մեր «ձյունոտ գարեհան» թախճոտ մեղեդին,  
 Մեր ֆեճույ սրտի նազը ընտանի,  
 Մեր «Միտն Մտո»-ն ու «Մոկաց Միրգեն»,  
 Ու «Տէր ողորմեա»-ն մեր պատարագի,  
 Ոտք դրեց անձայն սրտին մեր հողի  
 Ու մեր հիաստանչ համերգը երկնեց...  
 Բայց ավա՛ղ, եղավ մեր հակատագրի  
 Ու սեւ եղեռնի նահատակը խեղճ:  
 Եվ այնուհետև դարձյալ որբ ու կոծ,  
 Դարձյալ շարդ, թալան ու մահահանդես,  
 Յիրուցան եղած անթաղ մեռելներ...  
 Մահից հողուպրած որբեր անհամար,  
 Եվ երկարածի՛ց ախորի համբա...  
 Դարձյալ մահվան սև մագիլն է անհա  
 Իր բունոտ նանկը խրել հեզեռեհե  
 Մեր ժողովրդի սրտում կարեվեր...  
 ...Բայց հին հրաշքը գործում է կրկին,  
 Կյանքը մեզ ընդմիշտ չի նահատակում,  
 Շարունակվում է երկունքի մեր հին,  
 Մեր ստեղծագործ երկունքին անհատնում:  
 Թեև մշտապես մնաց կիսավե՛ր  
 Տրտում երկիրը մեր կոտորակված,  
 Բայց հայու հոգին եղավ աներեք  
 Եվ դեմքը հայու անաղաքտ մնաց:  
 Դարձյալ հուրհրագ կայծր մեր մաքի,  
 Դիր ու արվեստի մշակներ եկան,  
 Եկան ու իրենց ֆանտաբր բերին  
 Որ ոգու գանձը մեր նվիրական  
 Հավերժ ունեանա ու նառագայթի...:  
 Ո՛վ գիտեր սակայն, միթե՛ գիտեին,  
 Դուչակեյ անգամ կհանդգնե՛ին,

Որ մրկածուսի փոքրկից հետո,  
 Պիտի գար մեծ օ՛րբ հերոսածին  
 Մեր դալուկ հակաի սև գիրը ջեջել,  
 Չունենար այլևս կյանքը մեր նորոգ  
 Մղձավանջով լի և ոչ մի գիշեր:  
 Է՛լ չէր խամրելու ծաղիկը վառման  
 Դարերով հյուսված մեր երազների,  
 Չէր խափանվելու մեր երթն հաղթական  
 Վեհ բարձունքն ի վեր մեր հուր տենչերի:  
 Ու տիտանական քափով վերստին,  
 Պիտի նորոգվեր ուժը մեր բազկի,  
 Մեր շենքերն հսկա երկինք թևեին,  
 Մյանելույզների ծովը պիտ մխար,  
 Մեր մագրոզների հեկը շնանգներ  
 Ու մեր գալիքի ուղին անաղաք  
 Արևի լույսի հեղեղով օձվեր...:  
 Ու դեռ ո՛վ գիտեր, թե պիտի մի օր  
 Ունենայինք պերն Երևանը մեր,  
 Մեր հեֆիաթների հրաշք դիցունին,  
 Լույսը մեր աչքի, հույսը դարավոր,  
 Ու մեր հանճարի մանյակը անգին,  
 Որի լուսարձակ շողերի ներքո,  
 Դիմացն Արարատ ձյունափառ լեռան,  
 Ջահի պես շողար Չարեցը հզոր,  
 Պոետը հսկա երկրին Նաիրյան...:  
 Եվ ապա խոհուն, ծանրանիստ, կայտառ,  
 Մեր գիտունների փաղանգն ունեանար:  
 Հագիվ թե անցներ ինչ-որ ակերարք  
 Որ մեր երկիրը հարսի պես զուգվեր,  
 Ու մեր երբեմնի ապառաժներն իսկ  
 Այսօր գմբուխայա շուրջառ հագնեին:  
 Ուրախ ֆրիշով կապույտ Սևանից,  
 Հրազդանը լույս բաշխեք բոլորին,  
 Տուն վերադարձի կարկաչը հեշեր  
 Քոյր տարագիր հայորդիներին:  
 Եվ մենք ամենևս կանգնած աներեք  
 Մեր Արագածի բարձրադիր գահին,  
 Լուսավորչի վառ կանթեղի ներքո,  
 Հպարտ գնեհինք տիեզերքն անհուն,  
 Կարդայինք շֆնաղ մեր գիշերների  
 Ու մեր աստղերի խորհուրդը խորին:  
 Խիեղը հրկիզվեր մեր աչքերի մեջ,  
 Մեր երազների առագաստն ուղչեր,  
 Մեր տեսիլների հուր բոցկլտար  
 Ու ազա՛տ, ազա՛տ մեր երգը հեշեր,  
 Խանդավառ գովքը մեր նոր օրերի,  
 Մեր գալիք կյանքի նախերգանքը վեհ...  
 ....Ու տե՛ս, ի՛նչ պայծառ վառվում է հեռվում  
 Ի՛նչ վառ շողում է շինչ հորիզոնում  
 Լուսեղեն փառքը պայծառ գալիքի  
 Մեր արևաբույր  
 Մեր լուսապարար  
 Նաիրյան երկրի...  
 ....Եւ այս բոլորը  
 Ո՛վ գիտեր սակայն:

